



**ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՄԲԼԵԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE**

Հայաստանի Հանրապետություն
Վանաձոր, Տիգրան Մեծի 59
Tigran Mets, 59, Vanadzor
Republic of Armenia
Tel. (հեռ) (0322) 4 22 68
E-mail hcav@hcav.am
E 1101

13 հունվարի, 2010 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Ա. Հովսեփյանին

Հաղորդում

2010 թվականի հունվարի 10-ին մեր կազմակերպությունը՝ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, դիտորդական առաքելություն է իրականացրել թիվ 10 ընտրատեղամասում մեծամասնական կարգով ԱԺ պատգամավորի լրացուցիչ ընտրությունների ժամանակ:

Դիտորդական առաքելության իրականացման ժամանակ մեր կազմակերպության դիտորդների կողմից արձանագրվել են որոշակի խախտումներ:

Դեպքի նկարագրություն

Թիվ 10/15 ընտրատեղամասում երեկոյան ժամը 20:00-21:00-ն ընկած ժամանակահատվածում ընտրական հանձնաժողովը մինչև քվեների հաշվարկը սուրճի ընդմիջում է կազմակերպել: Նշված մեկ ժամվա ընթացքում ընտրողների գրանցամատյանները դուրս են հանվել ընտրատեղամասից:

Ժամը մոտ 21:00-ին ոստիկանության աշխատակիցը ներս է մտել քվեաթերթիկների հաշվարկման սենյակ, դուրս է կանչել հանձնաժողովի նախագահին, գրուցել նրա հետ, ինչ-որ բան տվել նրան: Այնուհետև նախագահը ինչ-որ բան ձեռքին մոտեցել է չիրկիզվող պահարանին և ձեռքինը դրել պահարանի մեջ:

Քվեարկության արդյունքների հաշվարկման ընթացքում՝ ելունդների թիվը հաշվարկելուց հետո, պարզվել է, որ այդ տեղամասում քվեարկությանը մասնակցել է 582 մարդ, մինչդեռ քվեարկողների թվի հաշվարկի ընթացիկ տվյալների գումարից քվեարկությանը մասնակցած անձանց վերաբերյալ ստացվել է 480 տվյալ:

Քվեաթերթիկների հաշվարկի ժամանակ՝ ժամը 10:30-ին, երբ փակված է եղել ընտրատեղամասի դուռը, ընտրատեղամաս մուտք են գործել սկզբում երկու, այնուհետև չորս անձանոթ անձինք: Այս անձինք ընտրատեղամասից քաշքշելով դուրս են հրավիրել քվեաթերթիկների հաշվարկը նկարահանող լրագրողին, որի հետ դուրս է եկել նաև հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի նախագահը քվեաթերթիկների հաշվարկի աշխատանքները հանձնարարել է շարունակել հանձնաժողովի քարտուղարին: Սահմանված կարգի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հանել է քվեաթերթիկները, բարձրաձայն արտասանել քվեաթերթիկի մեջ համապատասխան նշման մասին և դրել քվեաթերթիկը համապատասխան տրցակի մեջ: Այս տրցակում առկա քվեաթերթիկների վերջնական թիվը պարզ չի եղել, քանի որ քվեաթերթիկների հաշվարկն ավարտված չի եղել և քվեատուփի մեջ դեռևս քվեաթերթիկներ են եղել:

Մի քանի րոպե անց հանձնաժողովի նախագահը վերադարձել է, արագ-արագ վերցրել է Արա Սինոնյանի օգտին քվեարկած քվեաթերթիկների տրցակը և տեղավորել թղթե տոպրակում: Հանձնաժողովի մյուս անդամները և ընտրատեղամասում ներկա գտնվող վստահված անձինք,

դիտորդները բողոքել են, որի հիման վրա հանձնաժողովի նախագահը թղթ պարկը բերել և դատարկել է քվեաթերթիկների հաշվարկման սեղանին: Պարկից դատարկված քվեաթերթիկներն ավելի շատ են եղել, քան այն քվեաթերթիկները, որոնք հանձնաժողովի նախագահը տեղավորել է պարկի մեջ:

Այս փաստի կապակցությամբ որևէ արձանագրություն հանձնաժողովի կողմից չի կազմվել: Տեղամասում ներկա գտվող մեր դիտորդի և Նիկոլ Փաշինյանի վստահված անձի կողմից կազմվել է արձանագրություն, որը ևս հանձնաժողովի նախագահը չի ստորագրել:

Երեկոյան՝ մոտ ժամը 22:36-ին, մեր կազմակերպության կողմից բանավոր բողոք է ներկայացվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով: Մոտ 30 րոպե անց թիվ 10/15 ընտրատեղամաս են ժամանել ՀՀ ԿԸՀ և Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները, սակայն որևէ կերպ իրավիճակը չի փոխվել:

Եզրակացություն կատարված խախտումների մասին

ՀՀ ընտրական օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քվեարկությունից հետո ժամը 20:00-ին հանձնաժողովի նախագահը փակում է քվեատուփի ճեղքը, դուրս հրավիրում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք չունեցող բոլոր անձանց և փակում տեղամասային կենտրոնը: Տեղամասային ընտրական հանձնաժողովը սկսում է քվեարկության արդյունքների ամփոփման նիստը:

Նույն օրենսգրքի 45-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կենտրոնական և տարածքային մարմինները, դրանց ծառայություններն ու ստորաբաժանումները պարտավոր են ապահովել ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը:

Նույն օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովը պայմաններ է ստեղծում տեղամասում ընտրությունների ազատ անցկացման համար, ապահովում է ընտրությունների՝ սույն օրենսգրքով սահմանված կարգը, դիմում է իրավասու պետական մարմիններ՝ սույն օրենսգրքի խախտման դեպքերում:

Այս կետի պահանջների խախտումներն առաջացնում են պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով թիվ 10/15 ընտրատեղամասում մեր դիտորդի կողմից արձանագրված խախտումները՝ խնդրում են Ձեր լիազորությունների շրջանակում համապատասխան միջոցառումներ ձեռնարկել:

1. երեկոյան ժամը 20:00-ին թիվ 10/15 ընտրատեղամաս մուտք գործած անձանց ինքնությունը պարզելու և պատասխանատվության ենթարկելու
2. թիվ 10/15 ընտրատեղամասային հանձնաժողովի նախագահի կողմից իրականացված ընտրական խախտումների և ցուցաբերած անգործության հիմքով
3. ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ իրականացման հիմքով պատասխանատվության ենթարկելու համար:

Կից ներկայացնում են թիվ 10/15 ընտրատեղամասում վստահված անձանց և դիտորդների կողմից կազմված արձանագրության պատճենը:

Հարգանքներով՝

կազմակերպության նախագահ,

Լուռու մարզի ՇՊԱԿ համակարգող՝

Արթուր Սաքունց